2.3. <Բաժանորդը> բաժանորդային վճարն ու մատուցված ծառայության արժեքը վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները <Օպերատորի> հաշվարկային հաշիվ փոխանցելու միջոցով: Վճարումը համարվում է կատարված դրամական միջոցները <Օպերատորի> հաշվեհամարին մուտքագրվելու պահից:
2.4. <Օպերատորի> կողմից <Բաժանորդի> բաժանորդային վճարը և մատուցված հեռախոսակապի ծառայությունների դիմաց հաշվարկված գումարները <Բաժանորդը> պարտավոր է վճարել մինչև հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա վերջին օրը ներառյալ, բացառությամբ դեկտեմբեր ամսվա ընթացքում մատուցված ծառայությունների համար վճարման ենթակա գումարների, որը վճարվում է տվյալ տարվա դեկտեմբեր ամսին:
2.5. Մատուցված Ծառայությունների ծավալը որոշվում է <Օպերատորի> բիլինգային համակարգի գրանցումների հիման վրա: Նշված գրանցումները/տվյալները հանդիսանում են <Բաժանորդին> մատուցվող ծառայությունների և դրանց ծավալների մասին անժխտելի ապացույց:

3. <Օպերատորի> պարտականությունները և իրավունքները

3.1 <**Օպերատորը> պարտավոր է՝**
3.1.1 Ելնելով գործող տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորություններից ապահովել կայուն և անխափան հեռախոսակապի ծառայություններ:
3.1.2 Իր ցանցի սահմաններում ապահովել հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը:
3.1.3.Սեփական նախաձեռնությամբ կամ <Բաժանորդի> հայտով վերացնել առաջացած կայանային և գծակաբելային վնասվածքները հեռախոսակապի ծառայությունների մատուցման Կանոններով սահմանված ժամկետներում.
3.1.4. Ոչ <Բաժանորդի> մեղքով հեռախոսագծերի վնասվածքների, հեռախոսացանցերում տեղի ունեցած վթարների դեպքերում ամրագրել խափանման օրը, ժամը և այն վերականգնել հեռախոսակապի ծառայությունների մատուցման կանոններով սահմանված ժամկետներում:
3.1.5.Ապահովել ՀԾԿՀ կողմից կարգավորման ենթակա հեռախոսակապի ծառայությունների սակագների բարձրացման մասին հրապարակային տեղեկատվությունը հեռախոսակապի ծառայությունների մատուցման կանոններով սահմանված ժամկետներում, իսկ այդ սակագների նվազեցման մասին՝ ոչ ուշ, քան նոր սակագների ներդրումից 1 օր առաջ:
Այս դրույթը կիրառելու պարտավորությունից <Օպերատորը> ազատվում է, եթե համապատասխան իրավական ակտի պաշտոնական հրապարակման օրվանից հետո սակագների բարձրացման մասին հրապարակային տեղեկատվության ապահովման ժամկետի պահպանումը հնարավոր չէ:
3.1.6. Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:
3.2 <**Օպերատորը> իրավունք ունի՝**
3.2.1 Անջատել <Բաժանորդի> հեռախոսագիծը (գծերը), հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող ամսվա մինչև վերջին օրը ներառյալ <Օպերատորի> կողմից մատուցվող հեռախոսակապի ծառայություններից ցանկացածի դիմաց վճարումները չկատարելու կամ սույն պայմանագրի պայմանները խախտելու կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում: Հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող 2-րդ ամսվա ընթացքում հեռախոսակապի ծառայությունների առկա պարտքերի մարման դեպքում անջատված հեռախոսագծերը ենթակա են վերամիացման:
3.2.2. Հանել սույն պայմանագրի 3.2.1 կետով սահմանված ժամկետում անջատված հեռախոսագծերը, հաշվարկային ժամանակահատվածին հաջորդող 2-րդ ամսվա մինչև վերջին օրը ներառյալ հեռախոսակապի ծառայությունների դիմաց պարտքերը չվճարելու դեպքում և դադարեցնել պայմանագրի գործողությունը՝ հանման օրվանից սկսած երկու ամսվա ընթացքում պահպանելով տեխնիկական տվյալները և վերականգման հնարավորությունը:
3.2.3. Հեռախոսահամարի հանման օրվանից 2 (երկու) ամսվա ընթացքում, ◻Բաժանորդի◻ կողմից պարտքերը չմարելու և վերականգման միանվագ ծառայության վարձը չմուծելու դեպքում, հեռախոսակապի ծառայությունների մատուցումը (նոր տեղադրում) իրականացվում է ընդհանուր հիմունքներով՝ հեռախոսակապի ծառայությունների դիմաց նախկին պարտքերը մարելու պայմանով:
3.2.4.. Մինչև պայմանագրի դադարեցումը հաշվարկել և գանձել բաժանորդային վարձը:
3.2.5. Անմիջապես անջատել բաժանորդային հեռախոսահամարը (գծերը) և լուծել սույն պայմանագիրը, եթե

- <Բաժանորդին> տրամադրված հեռախոսագիծը (գծերը), առանց լիազորված մարմնի լիցենզիայի և առանց <Օպերատորի> հետ նախնական գրավոր համաձայնեցման օգտագործվում է շահույթ ստանալու նպատակով կամ
- <Բաժանորդին> տրամադրված հեռախոսագիծը (գծերը), առանց <Օպերատորի> հետ նախնական գրավոր համաձայնեցման տրամադրվել են այլ անձի.
- <Բաժանորդը> հանրային հեռախոսացանցին է միացրել չսերտիֆիկացված վերջնակետային սարքավորում կամ այնպիսի վերջնակետային սարքավորում, որը համատեղելի չէ կամ միջամտում է